# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/24-2

գ.Երևան «17» «05» 2018թ.

<<ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն>>, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս վարչության պետ Ռ. Հովհաննիսյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետ` <<Գնորդ>>, մի կողմից, և <<Մեղտեխսերվիս>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Մանուկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ` <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հծացևով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի`**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք` պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5 922 840 (հինգ միլիոն ինը հարյուր քսաներկու հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքի ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է __12__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204789
Վարչության պետ՝
Ռ. Հովհաննիսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

"Մեդտեխսերվիս" ՍՊԸ
ք.Երևան, Լեո-12
"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
Տնօրեն՝
Ա.Մանուկյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1
17.05.2018 թ. կնքված
N 22 ԱՆ ԺՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/24-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 33111230/1 | ավտոմատ բաժանավորիչի ծայրակալներ 10-200 մկլ | ROLLMED CO., LTD, Չինաստան | Ավտոմատ բաժանավորիչի ծայրակալներ 10-200 մկլ, Ֆորմատ` հատ, Ֆիրմային նշանի առկայությունը | հատ | 3.5 | 7000 | 2000 | ք.Երևան Արշակունյաց 2 | 2000 | 2-րդ եռ. – 2000 հատ |
| 5 | 33131410/1 | Էնդոդոնտիկ պարագաներ | OSAKADENT GROUP LIMITED, Չինաստան | Էնդոդոնտիկ պարագաներ, իր մեջ ներառում է. Pesso Reamers -N1-6, կանալ բացելու համար /Միկրոմատորի համար/<br>Gate drills - N1-6, կանալ բացելու համար /Միկրոմատորի համար/<br>Ռիմեր ֆայլ - N15-40<br>Միլլերի ասեղներ - մեկանգամյա օգտագործման, N1, N2, N3<br><br>Ֆայլեր H-files - Արմատախողովակը մշակելու համար | հատ | 10000 | 20000 | 2 | ք.Երևան Արշակունյաց 2 | 2 | 2-րդ եռ. – 2 հատ |
| 21 | 33141131/1 | Արյուն վերցնելու ժապավեն ամրակներով (ժգուտ) | ROLLMED CO., LTD, Չինաստան | Արյուն վերցնելու ժապավեն գույնը կապույտ, կտորից, պլաստմասե ամրակով: ֆորմատ հատ | հատ | 220 | 15840 | 72 | ք.Երևան Արշակունյաց 2 | 72 | 2-րդ եռ. – 32 հատ<br>3-րդ եռ. – 40 հատ |
| 22 | 33141134/1 | Բինտ էլաստիկ ամրակով 8մx3մ | ROLLMED CO., LTD, Չինաստան | Բինտ էլաստիկ 8սմX3մ ամրակով: Ֆորմատ: հատ | հատ | 450 | 58500 | 130 | ք.Երևան Արշակունյաց 2 | 130 | 2-րդ եռ.-50 հատ<br>4-րդ եռ.-80 հատ, ոչ ուշ 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 33141135/1 | Բինտ էլաստիկ ամրակով 8մx1,5մ | ROLLMED CO., LTD. Չինաստան | Բինտ էլաստիկ 8մX1,5մ ամրակով: Ֆորմատ: հատ | հատ | 360 | 46800 | 130 | ք.Երևան Արշակունյաց 2 | 130 | 2-րդ եռ.-50հատ, 4-րդ եռ.-80հատ, |
| 41 | 33141173/1 | մեզի տոպրակներ | ROLLMED CO., LTD. Չինաստան | Մեզընդունիչ, փակ, ստերիլ 2լ: ֆորմատ:հատ: | հատ | 70 | 35000 | 500 | ք.Երևան Արշակունյաց 2 | 500 | 2-րդ եռ.-200հատ, 4-րդ եռ. -300հատ, |
| 51 | 33141193/3 | ատամնաբուժական սպառման պարագաներ | MELBUR INDUSTRIES CO., LIMITED /Dochem, Չինաստան | Թղթե շտիֆտ <<Փեյփր Փոյնթ>> N15-40: Բաղկացած է վեց սրվակից և յուրաքանչյուր սրվակում 33 հատ, տարբեր համարների և տարբեր հաստության թղթե շտիֆտներ: | տուփ | 15 | 91500 | 6100 | ք.Երևան Արշակունյաց 2 | 36 | 2-րդ եռ. -12տուփ, 3-րդ եռ. - 24տուփ, |
| 52 | 33141193/2 | ատամնաբուժական սպառման պարագաներ | MELBUR INDUSTRIES CO., LIMITED /Dochem, Չինաստան | Ատամնաբուժական բամբակե վալիկներ: Ֆորմատ: 500 հատ: Նախատեսված բերանի խոռոչը չոր պահելու համար: | տուփ | 1350 | 48600 | 36 | ք.Երևան Արշակունյաց 2 | 36 | 2-րդ եռ.-10տուփ, 3-րդ եռ. -10տուփ,4-րդ եռ. - 16 տուփ, |
| 53 | 33141193/3 | ատամնաբուժական սպառման պարագաներ | MELBUR INDUSTRIES CO. LIMITED /Dochem/ Չինաստան | Հերմետիկ փաթեթ ախտահանվող ատամնաբուժական գործիքները պահելու համար: ֆորմատ: հատ: Չափսը 90մմX230մմ, ինքնասոսնձվող, ախտահանում կատարելիս ինդիկատորի գունային փոփոխությունով: | տուփ | 1300 | 46800 | 36 | ք.Երևան Արշակունյաց 2 | 6100 | 2-րդ եռ.-3000տուփ, 3-րդ եռ. 3100տուփ, |
| 55 | 33141194/1 | ատամնալիցքի նյութեր | ООО «ТД ВЛАДМИВА», Ռուսաստանի Դաշնություն | Դենտին մածուկ: Դենտին ժամանակավոր պլոմբանյութ պարունակում է ցինկ-ֆոսֆատային ցեմենտ պոլիմերային հիմքի վրա, 2-3 ժամվա ընթացքում խոնավ միջավայրում կարծրանալու հնարավորություն: ֆորմատ պլաստմասե տարրայում 50գ: | տուփ | 800 | 27200 | 34 | ք.Երևան Արշակունյաց 2 | 34 | 2-րդ եռ. -12 տուփ,4-րդ եռ.-22 տուփ, |
| 56 | 33141194/2 | ատամնալիցքի | VOCO GmbH, | Ցեմենտ <<Ակվամերոն>> 35գ | տուփ | 26900 | 457300 | 17 | ք.Երևան | 17 | 2-րդ եռ. -4 տուփ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նյութեր/ 35գ | Գերմանիա | կամ համարժեք: Ձորմատ: տուփ: Լուծվում է թորած ջրով, որակական տվյալները, ապակեիոնոմերային, ֆիքսող ցեմենտ: | | | | | Արշակունյաց 2 | | 3-րդ եռ.- 5 տուփ 4-րդ եռ.-8 տուփ. |
| 57 | 33141194/3 | ատամնալիցքի նյութեր | VOCO GmbH, Գերմանիա | Պլոմբանյութ լուսային <<Ադմիրա>> 28գ կամ համարժեք: Բաղկացած է 7*4գր ներարկիչներից (A1,A2,A3,A3.5,B2,B3,C2,OA2) գույներից, 4մլ սոսինձից,5մլ թթու: Լուսային պլոմբանյութ միկրոհիբրիդ համակարգով, աքսեսուարներ: | տուփ | 129500 | 1942500 | 15 | ք.Երևան Արշակունյաց 2 | 15 | 2-րդ եռ. -5 տուփ 3-րդ եռ.- 5 տուփ 4-րդ եռ.-5 տուփ, |
| 58 | 33141194/4 | ատամնալիցքի նյութեր | VOCO GmbH, Գերմանիա | Պլոմբանյութ լուսային <<Արաբեսկ>> 28գ կամ համարժեք: Բաղկացած է 7*4գր ներարկիչներից (A1,A2,A3,A3.5,B2,B3,I) գույներից, 4մլ սոլոբոնդից,5մլ թթվային մածուկից: Լուսակարծրացող, ունիվերսալ պլոմբանյութ միկրոհիբրիդ համակարգով: | տուփ | 89000 | 1335000 | 15 | ք.Երևան Արշակունյաց 2 | 15 | 2-րդ եռ. -5 տուփ 3-րդ եռ.- 5 տուփ 4-րդ եռ.-5 տուփ, |
| 59 | 33141194/6 | ատամնալիցքի նյութեր | ЧП "ЛАТУС", Ուկրաինա | Պլոմբանյութ լուսային «Լատելյուքս» 62գ: Հավաքածուն իր մեջ ներառում է 10x5գ մածուկ (A2, A3, A3.5, B1, B2, C2, OA2, OA3, OB3, In), 5գ մածուկ MS (OA3), 2x2,2գ մածուկ flow (A2, OA3), 2.2գ մածուկ Reoliner –LC, 6գ բոնդ Monotex, 3գ լաք-գլազուր Lateglint, 2x4գ թթու Soft Etch, 3գ ռենտին Saturol, 3գ փայլեցնող պաստա Diapol-1.5, 25 ապլիկատորի ծայրակալ, 20 վրձինի ծայրակալ. Ծայրակալների համար նախատեսված բռնակ, 3 վրձին նախատեսված լաքի համար, 100 մատրիցա, 20 ներերկման ծայրադիրներ, փայլեցնող Ռեզիններ, գունավորման սանդղակ | տուփ | 43000 | 258000 | 6 | ք.Երևան Արշակունյաց 2 | 6 | 2-րդ եռ.-3տուփ 4-րդ եռ.- 3 տուփ, |
| 62 | 33141194/10 | ատամնալիցքի նյութեր | VOCO GmbH, Գերմանիա | Պլոմբանյութ լուսային <<Պոլոֆիլ սուպրա>> 28գ կամ համարժեք: Բաղկացած է 7*4գր ներարկիչներից (A1,A2,A3,A3.5,B2,B3,I) գույներից, 4մլ սոլոբոնդից, 5մլ թթվային մածուկ: Լուսային պլոմբանյութ միկրոհիբրիդ համակարգով: | տուփ | 85600 | 684800 | 8 | ք.Երևան Արշակունյաց 2 | 8 | 2-րդ եռ.-4տուփ 4-րդ եռ.-4 տուփ. |
| 66 | 33141211/4 | բժշկական այլ գործիքներ | ОАО "МИЗ-Ворсма", | Վիրաբուժական հավաքածու: Բաղկացած է 21 կտորից, գործիքները | հատ | 31000 | 620000 | 20 | ք.Երևան Արշակունյաց 2 | 20 | 2-րդ եռ. – 10հատ. 3-րդ եռ. – |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Վիրաբուժական հավաքածու | Ռուսաստանի Դաշնություն | պետք է լինեն չժանգոտվող մետաղից, քրոմ-նիկել մետաղից, ռուսական արտադրության,<br>• Ստերիլիզատոր П-40-1հատ<br>• Ունելի անատոմիական 15սմ-2հատ<br>• Ունելի վիրաբուժական 15սմ-2հատ<br>• Ճանկիկ/ցապկա/-2հատ<br>• Վիրաբուժական սեղմիչ ուղիղ 16սմ-2հատ<br>• Վիրաբուժական սեղմիչ թեք 16սմ-2հատ<br>• Վիրաբուժական սեղմիչ կոխեր 16սմ-2հատ<br>• Կորնցանգ ուղիղ-2հատ<br>• Կորնցանգ թեք-2հատ<br>• Գդալաքցան-2հատ<br>• Ասեղաբռնիչ 16սմ-2հատ<br>Համապատասխանության և ծագման սերտիֆիկատների առկայություն | | | | | ք 2 | | – 5 հատ |
| 79 | 33411560/1 | պուլսէքստրակտոր N100 | ООО "КМИЗ экспорт, Ռուսաստանի Դաշնություն | Պուլպէքստրակտորներ N100: Ֆորմատ՝ տուփ: 1-5 չափի ատամնաերվը հանելու համար | տուփ | 3800 | 228000 | 60 | ք.Երևան Արշակունյաց 2 | 60 | 2-րդ եռ.- 30 տուփ<br>3-րդ եռ.-30 տուփ |
| | | | Ընդամենը | | | | 5 922 840 | | | | |

Ծանոթություն՝ ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին
պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարար-
ման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

*Բոլոր ապրանքները պետք է ունենան գրանցման սերտիֆիկատ և լինեն գործարանային փաթեթավորմամբ, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար:

*Բոլոր ապրանքները մատակարարվելու են մատակարարի միջոցներով, ուժերով և հաշվին, բաքաբաժնելիք խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանված է Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի:

*Բոլոր դեպքերում հասկանալ «կամ համարժեք» արտահայտությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին համապատասխան:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն | "Մեդտեխսերվիս" ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց 63 | ք.Երևան, Լեո-12 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | "Հայէկոնոմբանկ" ԲԲԸ |
| Հ/Հ 900011474534 | Հ/Հ 163008142792 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 02205001 |
| Վարչության պետ | Տնօրեն |
| Ռ. Հովհաննիսյան | Ա.Մանուկյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 2*
*«17» «05» 2018 թ. կնքված*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԿՃԱՊՁԲ-18/24-2*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում** | | | | |
| | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| **1,5,21,22,23,41,51,52, 53,55,56,57,58,59,62,6 6,79** | ԴԵՂՈՐԱՅՔ | - | 2 267 740 | 4 018 740 | 5 922 840 | 5 922 840 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն | "Մեդտեխսերվիս" ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ք.Երևան, Լեո-12 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | "Հայէկոնոմբանկ" ԲԲԸ |
| Հ/Հ 900011474534 | Հ/Հ 163008142792 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 02205001 |
| **Վարչության պետ՝** | **Տնօրեն՝** |
| **Ռ. Հովհաննիսյան** | **Ա.Մանուկյան** |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 3*
*«_17_» «_05_» 2018 թ. կնքված*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/24-2 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| "Մեղտեխսերվիս" ՍՊԸ | ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության |
| ք.Երևան, Լեռ-12 | ք. Երևան, Արշակունյաց-63 |
| "Հայէկոնոմբանկ" ԲԲԸ | ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն |
| Հ/Հ 163008142792 | Հ/Հ 900011474534 |
| ՀՎՀՀ 02205001 | ՀՎՀՀ 02204739 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «                    » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«17» 05 2018 թ. կնքված*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/24-2 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________ -ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________
(Գնորդի անվանումը) (Վաճառողի անվանումը)
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________ -ին կնքված N ______________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

______________
ազգանուն, անուն

______________
Ստորագրություն

**Ընդունեց**
**հայտը նախագծած ներկայացուցիչ՝**

______________
ազգանուն, անուն

______________
ստորագրություն